

36. ՍԱՊՐ ՍԱԼԱՄԱԹ

Կէղնի, չէղնի թաք ոհիտ տղե մը կէղնի, ուրին էլ բան չէղնի։ Կէլնի կկարգվի, կնիկըմ կբերե ուրեն։

Յոթ-ութ ամիս կմնա էտ կնկա խեչ, կէլնի կթորկե, կէրթա խուրբաթ։

Տաս-տրսնուհինգ տարի կմնա խուրբաթ։ Իսկի միտկ չընկցու, թե տղա, ընծիկ կնիկ մը կեր, թորկի էկա, ուրեն մարդ ու մատաթ լե չկեր, աճայիպ մեռավ մի՞, սա՞ղ է, հեչ օլմազսա դիրըմ գրիմ, հարցում զէգ մարդ, փարա չըմ ճամբի, դարղակ գիրըմ լե չճամբի՞մ։

Ավուրըմ մեկ իմալ էղավ, միտկ ընկավ ուր տուն ու տեխ։ Ինք ուրեն ասեց. «Տղա, ես զիմ ումըր խուրբթութենի մեջ կերա, հերկ չէ՞ մնամ էլու դռներ, փողներ. հ'ելնիմ էրթամ իմ տուն, վալայի,—ասեց,— լուսուն կէլնիմ,— ուր դադկ լե տրսնուհինգ տարվան մեչ էղեր էր յոթ հարուր խըռոշ,— կէրթամ, կիտամ կառնիմ թֆանքըմ, կէձգիմ վիզնվերս ու կհընկնիմ ճամբախ, էրթամ»։

Հ'ելավ լուսմութ, հ'իջավ, գնաց շուկեն, օր թֆանքըմ առներ ուրեն թորկեր էրթեր ուր տուն։ Փողցի գլուխ դարվեշըմ հ'ելավ հ'առեջ։

Ասեց.— Տղա, հարիր խըռոշ տուր ընծիկ, քըզիկ խելքըմ սովրցում։

Տղեն ասեց.— Հըմին-հըմին յոթ հարիր խըռոշ ունիմ, հարիր խռոշ կիտամ էդա դարվեշուն, թըղ խելքըմ սովրցու, տեսնամ իմա՞լ կէղնի։

Հանեց զհարիր խըռոշն տվեց։

Դարվեշն ասեց.— Սապր սալամաթ է։

Տղեն ասեց.— Էդի՞, էդ հիչ։

Թորկեց գնաց, հար հ՝իրկուն օլըրտավ, էկավ ուր խոնախանեն. պառկավ քնավ։

Ասեց. «Վալայի, էլ չըմ մնա, կէլնիմ լուսուն, կառնիմ ընծիկ խորոտիկ չախմախլի մը, կէձգիմ վիզս, կթորկիմ, կէրթամ իմ հ՝երկիր»։

Հ՝ելավ լուսուն, հ՝իջավ, կէրթեր ջուկեն, օր ուրեն թֆանքըմ առներ, թորկեր էրթեր ուր հ՝երկիր։ Մեկ լե փողցի գլուխ դարվեշ հ՝ելավ հ՝առեջ։ Ասեց.— Տղա, հարիր խըռոշ տուր ընծիկ, քըղիկ խելքըմ սովրցում։

Տղեն ասեց.—Ջանըմ, հարիր խըռոշ հ՝էրեկ տվի, հարիր լե չէղավ, հ՝էսօր կիտամ, տեսնամ էդ մարդ ի՞նչ խելք կսովրցու ընծիկ։

Հանեց հարիր խըռոշ լե տվեց։ Դարվեշն ասեց.—Կյոնյուլ սավան գյուզալ օլուր տյունյադա*։

Տղեն ըսավ.— էդա լե գնաց փըստ։

Թորկեց գնաց ջուկեն օլըրտավ։ Հ՝իրկուն օր էղավ, տարցավ գնաց ուր խոնախ, հանեց զհալվըներ կպառկեր։ Ասեց. «Վալայի, լուսուն կապերով կապին՝ էլ էդա տեխ չըմ մնա, կէլնիմ կէրթամ թֆանքըմ կառնիմ, կթորկիմ կէրթամ իմ տուն. հար հ՝ի՞ր էդա տեխրանք սուրունտըրմիշ էղնիմ, հերկ չէ՞, հոգիս լե կորավ»։

Քնավ։ Հ՝ելավ լուսուն լվացվավ, հ՝իջավ կէրթեր ջուկեն, օր ուրեն թֆանքըմ առներ, թորկեր էրթեր ուր ճամբախ, միրըթի դարվեշ, թիկ կանավ դեմ։ Ասեց.—Տղա՛, հարիր խըռոշ տուր, քզիկ խելքըմ սովրցում, թորկ գնա քու տուն։

Տղեն ասեց.— Ախըր էրկու հարիր խըռոշ բաղեավա տվեր իմ ջրի հետ, կանի հարիր խըռոշ լե կիտամ, տեսնամ ի՞նչ կասես։ Զէգոր տակ լե հանիմ, թորկիմ էրթամ իմ ճամբու հետ, հանեցի հարիր խըռոշ լե տվեցի։

Դարվեշն ասեց.— Հար սապըրըն բիր խերի վար**։

Բարեմնաց էղավ, թորկեց գնաց ուր ճամբու հետ։ Էն գնաց ուր ճամբու հետ, տղեն լե գնաց ուր ճամբու հետ։

Տղեն մեկ լե ասեց. «Հ՝էսօր լե հ՝ընցուցի, լուսուն խերն հաղ, կէլնիմ, կէրթամ ջուկեն, կառնիմ ընծիկ թֆանքըմ, կէձգիմ վըզնըվերս ու կթորկեմ կէրթամ, էլ հասավ բոկս, զընճըլով կապին՝ չըմ կանի»։ Պառկավ, քնավ։ Հ՝ելավ լուսուն, հ՝իջավ ջուկեն, առավ ուրեն թֆանքըմ, խոթ էձգեց վիզ ու յալա, հ՝երկիր հ՝ու՞ր իս, էկա քի, զճամբախ տվեց հ՝առեջ։

Շատ գնաց, քիչ գնաց, գնաց տեսավ օր քարվանըմ էկեր է, ջրհորի վրեն տրեր է զուր բեռներ։ Քարվանբաշին վիրն օր կասե. «Ի՞չեք, ջրհո-

---

* Սրտի սիրած գեղեցիկ է աշխարհիս մեջ (Ս. Բ.)։

** Ամեն մի համբերության վերջը բարի է (Ս. Բ.)։

րի միշեն շուր հանեք, էդա հայվրներ ծառվուց մեռան», մեկ զինկ հ՝առեջ չիտա ու ձեն չհանե։

Էդ տղեն էնդիեն ճետկըցավ, ասեց.—Աղա՛, ես կիջնեմ։

— Լաո,— ասեց քարվանբաշին,— մադամ օր դու կհանես, էդա հինդ օսկին լե բաշխիշ քզիկ։

Հանեց զուր հալվրներ ու թֆանք դրեց ջրհորու պռուկ, հ՝իջավ ջրհորու մեջ, մեկ-մեկ քաշեց ու ղէդ կայենական քարվան՝ թե ձիանք, թե մարդիկ, ջրեց։

Օր ջրեց խըլըսավ, ղչվան թալին հոր։

Ասին.— Տղա՛, կապե քու մեջք, քաշինք զքզիկ, հանեք դուրս։

Տղեն օր կապեց մեջք, բաղրկնի մշկներ քաշեցին հանեցին հար հորու օրթեն չվան կտրավ ու տղեն՝ ղըրոմփ, ջրի մեջ։ Էլ ի՞նչ էրին, չէրին չկաոցան օր տղեն հանեն դուրս։ Թե ղչվան կըցմըցեցին հ՝իրար, թե շալ կապեցին չվնի գլուխ, չհասավ հորու տակ։ Բաղրկանբաշին հանեց զհինդ հարիր խըռոշ հանդուրցեց տղի ճառեկի ծեր, թֆանք լե օղմըրկցուց հորնըվեր, թորկեց գնաց։ Ասեց.—Թե օր ուրեն ըռըզխ էղեր է, կէլնի կիգա, կհազնվի զուր հալվրներ, կառնե զուր փարեն ու թֆանք կէրթա։

Տղեն է, էդ հորու մեջ մնաց, մարախից փաթլամիշ կէղներ, միտկ ընկավ դարվեշի խրատ. «Սապր սալամաթ է», ասեց. կանի տեսնամ ի՞նչ կէղնի։ Էդ մթալի մեշն էր, լուսըմ տեսավ, իշքեց տեսավ օր՝ ծակըմ։ Մտավ էդ ծրկեն ու գնաց։ Բաղ ու բաղչի մը մեջ հ՝ելավ դուրս։ Բաղ ու բաղչա չէր էլ, դրախտ։ Մեկդին բլբուլներ կկանչեն, մեկ դին հաուզ կբըխբըխկեր, քոշկ ու սարային լե շինուկ էր բախչի գլուխ։

Գնաց մտավ բախչի մեջ։ Տեսավ օր մարդըմ նստուկ է օսկի աթոռկի վրեն, աթոռկ լե դրուկ է վըր հաուզի պըռկեն։ Զուկըմ կա մեջ հաուզին, նը կէրթա, նը կիգա. կաներ է, պաղ-պաղ էդ մարդու քիթ ու բերնըվեր կիշքե։ Մարդ լե էդ ծրկան դին կիշքե։ Մարդու դեմ լե խորոտիկ ախչիկըմ կա, ուտիս-չուտիս հրմա թամաշա էնիս, դու գինաս մանի տրսնուհինգ ավուր լուսնյակ։ Մարդըմ լե էնդին կանուկ է էդոնց վրեն կգքրի։

Մոտեցավ, բարև տվեց, առան գբարև։

Էն մարդն օր հավուզից էնդին կանուկ էր, վերուց ասեց.—Կտրիճ, տես էդա մարդ լուսմութե հար հ՝իրկուն, հ՝իրկըվենե հար լուս կթալե զուր աթոռկ էդա շատըրվանի պռուկ, կնստի ու էդա ձուկ թամաշա կէնե։ Էդա հուրնեկ-հրեղեն ախչիկ կիգա, կնստի էդոր դեմ։ Կէնե, չէնե զգլուխ վի չվերցու, հ՝իրսընվեր չիշքե, էդի իմա՞լ կիգա դուրս։

Դարվեշի ասած խըրատ ընկավ տղի միտկ, օր ասեց. «Կյոնյուլ սա-

վան գյուզալ օլուր տյունյադա»։ Զկան փարդեն պատռավ, տկլոզ, իմանի չիփլաղ ախչիկըմ հ'ելավ նստավ շատըրվանի պըռուկ։

Էն օր հ'ելավ, նստավ էնտեխ, աթոռկի վրավու ախչիկ աներևույթ էղավ, օսկի աթոռկի վրավու մարդ շուտըմ վազեց գնաց, ձեռկըմ հալավ բերեց, էձգեց էդ ախչկա վիզ ու առավ, հ'ելավ վի։

Առավ հ'ելավ վի, դառցավ էկավ ընծիկ* ասեց.— Տղա, հ'ուզե իտամ։

Ասի.— Ես ինչ հ'ուզիմ քինե, կուզիմ օր հանիս զիս լուս աշխարհ։

Մարդն ասեց.—Տղա՛, ես Քաշանց թագավորի տղեն իմ։ Էդ օր կասիս՝ կէղնի ու կէղնի։ Հըմկա փչիմ, կընկնիս լուս աշխարհ։ Օսկի ու արծաթ հ'ուզե։

Գնաց հակուբե մը լե օսկի ու արծաթ լցեց, բերեց տվեց ընծիկ։

Ասեց.— Զքզիկ քիփ բռնե։

Ասի.— Քիփ իմ։

Մեկ լե տեսնամ փչեց զիս, հ'ընկա լուս աշխարհ։ Քիչըմ քելեցի, էկա էդա դին։ Տեսնամ էդա իմ թֆանք, էդա իմ հալվըներ, էդա հինգ հարիր խրոռոշն է, օր բազրկան ընծիկ բաշխիշ տվեց, էդա էն շրրհոր։ Վերցում զիմ բոզչեն, զարկիմ հանթեստակս, ձեռքըմ հալավ Քաշանց թագավորի տղեն էր տվի, հագիր ենք, թֆանքս էձգիմ վիզս, թալիմ զիմ հակուբեն փեճիս ու ճամբախ իտամ հ'առեշս։

Էկա, էկա իմ տուն։ Հ'իրկուն էղեր էր։ Էկա հ'իլա վի, բացի զդուռ, օր մտնեմ ներս, մեկ լե ի՞նչ տեսնամ, տրսնուհինդ տարեկան նորահաս խորթըմ գըրգվեր է իմ կընկա ծրծերն ու պառկի։

Հ'իշուցի զթֆանք փեճես զաղզոթիկ դրի վրեն, կանկըցուցի վըր օտաց, էդ էր օր զթաթիկ կքաշենք զարկենք սպանեք, ասի՝ «Տես էդա ո՞րն է, էկեր է իմ կնկա ծոց պառկի» Դարվեշի վերշին խրատ հ'ընկավ միտկս։ Ասի ես ընծիկ՝ շանըմ, կանի տեսնամ էս ի՞նչ է կէնիմ։ Զէգ մարդու էրկու խրատ լե բռնեցի, ախըրն աղեկ էկավ դուրս, զէդա խրրատ լե բռնիմ, տեսնամ ի՞նչ կիդա դուրս։

Սիրտս չտարավ։ Զէ՞ նամուս է, խիրրն շան թալեր ին, չկերեր է, վերցի խաղով հարցուցի.

Ախշամ դըր, ուլանմիշսան, ուլանմիշսան
Օճախըն յանդրմիշսան,
Խոյնդաքի իկիթ
Նայըն դըր, կյալըն։

---

* Այստեղից բանասացը պատմում է 1-ին դեմքով (Ս. Կ.)։

Առավ կնիկ խաղով պատասխանեց.

Ախշամ դըր, ույանմիշամ, ույանմիշամ,
Օճախի յանզըրմիշամ,
Խոյնմտա յաթան իկիթ.
Ձի՞թ մամամի անդըրմիշամ,
այըմ՞։

Կին գիտե, օր իր էրիկն է, այդ հարցումը կընե։

Այդպես օր կըսե կին, մարդն շուքը կիտա աստծուն. «Փառք աստծու, ես իմա՞լ անկաճ էրի դարվեշի խրատին, չմտա էդոնց խաթլի տակ»

Հուշիկըմ զխուրճին ու զթֆանկ կիշու, կդնե մեկդին, կիգա փաթվի կնկա ու տղի վիզ, կասե.— Ես լե քու իրիկն եմ ու էնդրա հեր։

Նոր նստան, կերան խմեցին, ուրանց էրին քեֆ ու ուրախութեն, պառկան քնան։

Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնիք ձըր մուրազին։

Աստծուց հ'իշավ իրեք խնձոր։ Մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե՝ անկաճ էնողին։

---

* Երեկո է, զարթիր, զարթիր,
Ճրագն է վառ,
Ցոցդ պառկող կտրիճ,
Ի՞նչդ է, կնիկ։

Ներեկո է, զարթուն եմ, զարթուն եմ,
Ճրագս վառեր եմ,
Ցոցս պառկող կտրիճ,
Զույգ ձեռներովս մեծուցեր եմ, մարդ (Թ. Բ.)։